

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ _____ Ա. Բալյան *A. Balayan*

<< 31 >> _____ 08 _____ 2023թ.



**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

«Չարենցավանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան Յ
հիմնական դպրոց» ՊՈԱԿ

III^ա դասարան

Սարգսյան Սերինե Արտավազի

<<2023-2024>> ուսումնական տարի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական նիւթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ժամկետը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտների ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը: V. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱԿԱՆ ԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական կունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններն հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման, համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով,

դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. գերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները.

5) ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Մույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>>, պետական ոչ առևտրային կազմակերպության (կրճատումով)

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)

- ա) դաստիարակչական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
 - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.
 - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
 - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործառնությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
 - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
 - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.
 - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

73. Սովորողն իրավունք ունի՝

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
 - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
 - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
 - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
 - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
 - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ	2-3
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4-9
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ	10-11
ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,	
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ	12
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ,	
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ	13
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ	14
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱՆՎՈՐ,	
ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ	15
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ	16
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ	17
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ	18
ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	19
ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	20

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խամար	հասցեն	Հեռախոսի համարը	Ծնողի (խնամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	դիմելու ծանուցում
1	3թ.,20շ., 36 բն.	091-76-60-17	Չի աշխատում	ապահով	կատարված է
2	3թ., 16շ., 17 բն.	2015	Չի աշխատում	ապահով	կատարված է
3	3թ., 23շ., 44բն	094-88-14-43	Չի աշխատում	ապահով	կատարված է
4	3թ., 11շ.,27բն	077-51-50-83	Չի աշխատում	անապահով	կատարված է
5	2թ., 6շ., 5բն.	043-17-69-71	Նորք Մարաշ ԲԿ, ընդունարանի մենեջեր	ապահով	կատարված է
6	2թ., 1շ., 15բն.	094-13-03-41	Չի աշխատում	ապահով	կատարված է
7	5թ., 18շ., 36բն.	098-25-93-18	Չի աշխատում	ապահով	կատարված է
8	3թ., 10շ., 2 բն	094-59-50-28	Չի աշխատում	ապահով	կատարված է
9	3թ., 12 շ., 6 բն.	093-85-10-16	Չի աշխատում	ապահով	կատարված է
10	7թ., 14շ., 17բն	098-17-06-05	Չարենցավանի Հաստոցաշինական Գործարան, ինժեներ-տեխնոլոգ	ապահով	կատարված է
11	8թ., 19շ.,1 բն.	098-04-61-07	ՉարենցավանիԲԿ, Շտապօգնությանկանչ, սպասարկող	ապահով	կատարված է
12	5թ., 7շ., 9բն.	094-44-10-06	<<Բեկոն Պրոդուկտ>>ընկերություն,վարորդ	ապահով	կատարված է
13	7թ., 4շ., 4 բն.	098-00-13-25	Չի աշխատում	ապահով	կատարված է
14	5թ., 16շ., 17բն.	093-79-25-77	Հայաստանի ազգային արխիվ, առաջին կարգի արխիվագետ	ապահով	կատարված է
15	3թ., 35շ., 16բն.	098-33-72-19	Չի աշխատում	ապահով	կատարված է
16	6թ., 25շ., 21բն.	077-20-01-96	Չարենցավանի Պետական Քոլեջ, անգլերենի դասախոս	ապահով	կատարված է
17	2թ., 13շ., 22բն.	077-28-63-91	Չի աշխատում	ապահով	կատարված է
18	7թ.,6շ.,21բն.	093-40-97-17	Չի աշխատում	ապահով	կատարված է
19	2թ., 8շ., 19բն.	094-22-44-80	Չի աշխատում	ապահով	կատարված է
20	7թ., 4շ., 8բն.	094-54-40-02	Չի աշխատում	ապահով	կատարված է
21	3թ., 13շ.,25բն.	093-54-18-30	Չի աշխատում	ապահով	կատարված է
22	3թ., 3շ., 17բն.	093-47-80-58	Չի աշխատում	ապահով	կատարված է
23	3թ., 21շ., 35բն.	044-77-71-33	Չի աշխատում	ապահով	կատարված է
24	6թ., 25շ., 44բն.	098-06-05-46	Չարենցավանի հ.3 հիմնական դպրոց, դասվար	ապահով	կատարված է
25	7թ., 18շ., 9բն.	093-93-58-40	Չի աշխատում	ապահով	կատարված է
26	2թ., 11շ., 41բն.	094-92-27-46	Խաղաղապահ զորամաս, պայմանագրային զինծառայող	ապահով	կատարված է
27	7թ., 3շ., 14բն.	093-04-61-06	Չի աշխատում	ապահով	կատարված է
28	5թ., 12շ., 13բն	097-22-75-53	Չի աշխատում	ապահով	կատարված է
29	3թ.,14շ., 35բն.	097-20-04-89	Չի աշխատում	ապահով	կատարված է
30	2թ., 4շ., 4 բն.	097-34-89-09	Չի աշխատում	ապահով	կատարված է
31	3թ., 16շ., 12բն.	097-22-46-22	Չի աշխատում	ապահով	կատարված է
32	6թ., 21շ., 25բն.	097-28-79-04	Չի աշխատում	ապահով	կատարված է
33					

ԿՐԹԱՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)՝ 2023-2024 ուսումնական տարին 3-րդ դասարանցիները սկսեցին 27 աշակերտով: 27 աշակերտներց 13-ը տղա են, 14-ը՝ աղջիկ:

Դասարանի մեծամասնությունը ուսման մեջ ցուցաբերում է բավարար առաջադիմություն: Նրանք սիրով են կատարում իրենց հանձնարարված յուրաքանչյուր առաջադրանք:

Աշակերտները համախմբված են, աշխատասեր, պարտաճանաչ և ընկերասեր, ունեն ուսման նկատմամբ պատասխանատվության զգացում:

Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի առաջադիմությունը բարձր պահելու ուղղությամբ, ձևավորել կարգապահ, կազմակերպված, պատասխանատու, համախմբված ու միմյանց նվիրված կոլեկտիվ: Դասարանում կան սոցիալապես անապահով / Ապանյան Էդգար /, հատուկ ուշադրության / Հախվերդյան Անուշ /, և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող / Ներսիսյան Աշոտ, Վիրաբյան Սարո / աշակերտներ:

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում՝ 2023-2024 ուսումնական տարում նախատեսված է անցկացնել ծնողական ժողովներ՝ որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, դաստիարակչական ժամեր՝ երեխաների բազմակողմանի դաստիարակչության նպատակով, այցելել որևէ գրողի տուն-թանգարան, տարբեր խորագրերով ներկայացումների՝ որոնք ուսուցողական բնույթ կկրեն: Նախատեսված է կազմակերպել <<Եկեք գովաբանենք այն մարդուն, որի անունը Մայր է >> խորագրով միջոցառումը, անցկացնել առարկայական և դաստիարակչական բաց դասեր: Առանձին աշխատանքներ տանել սոցիալապես անապահով, դասերից հետ մնացող, առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող, ԿԱՊԿՈւ աշակերտների և նրանց ծնողների հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակչություն՝ Հոգևոր դաստիարակչությունը մանկական տարիքում շատ կարևոր է առժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի երեխաների մեջ բարոյական արժեքներ սերմանելու: Այն ոչ թե երեխաներին սահմանափակելու և վախեցնելու համար է, այլ հույս, բարություն, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցելու համար:

3.2 Գեղագիտական դաստիարակչություն՝ Խնդիրն է երեխաներին սովորեցնել տեսնել և ճանաչել գեղեցիկը, այն տարբերել սոցիալից, ունենալ գեղեցիկ վարվելակերպ: Այն ուղղված է գեղարվեստական ճաշակ և գեղեցիկի նկատմամբ զգացումներ առաջացնելուն: Անհրաժեշտ է շատ կազմակերպել էքսկուրսիաներ, տարատեսակ աշխատանքներից ցուցահանդեսներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակչություն՝ Նպատակն է երեխաների մոտ զարգացնել քաղաքացիությունը, հայրենասիրությունը: Որի համար անհրաժեշտ է անցկացնել թեմատիկ զրույցներ, այցելել թանգարաններ, հերոսների հուշարձաններ, Եռաբլուր: Ընթերցել այդ թեմայով բանաստեղծություններ:

3.4 Ֆիզիկական դաստիարակչություն՝ Նպատակաուղղված է աշակերտների ներդաշնակ և ֆիզիկական զարգացմանը, առողջության ամրապնդմանը և կենսականորեն անհրաժեշտ շարժողական ունակությունների և հմտությունների զարգացմանը: Որի համար անհրաժեշտ է անցկացնել մարզական միջոցառումներ ու մրցումներ:

3.5 Աշխատանքային դաստիարակչություն՝ Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևորագույն խնդիրներից է, իսկ հիմնական նպատակը երեխաների մեջ աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումն է: Անհրաժեշտ է երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել աշխատանքի գործունեության նկատմամբ, ծանոթացնել նրանց աշխատանքի պարզագույն ձևերին:

3.6 Բնասպանական դաստիարակություն՝ Շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց է: Ուսուցման ձևերն են՝ միջոցառումները, արշավների կազմակերպումները, արգելավայրեր և արգելոցներ հաճախելը, ծառատունկ կազմակերպելը:

3.7 Դպրոց ընտանիք կապը՝ Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների բազմակողմանի ուսումնասիրություն: Դպրոցի և ընտանիքի համագործակցության պահանջված ուղղություններից մեկը երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է, որոնք հիմնականում անհատական բնույթ են կրում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
I շաբաթ	<p>ա. Դասագրքերի բաշխում</p> <p>բ. Դասարանի սոցիալապես անապահով, ծնողազուրկ, առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող, ԿԱՊԿՈՒ սովորողների հաշվառումն ցուցակի կազմում</p> <p>գ. Դասարանի սանիտարական վիճակի, համաճարակային կանոնների պահպանում</p> <p>դ. Դ/ժ «Աշակերտի օրվա ռեժիմը»</p> <p>ե. Ծնողական ժողով</p> <p>զ. Մաղնակցություն ԿԱՊԿՈՒ սովորողի ԱՈւՊ-ի կազմման գործընթացին:</p>	01.09-08.09	<p>դասվար</p> <p>ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ մանկավարժահոգեբանական թիմ</p>
II շաբաթ	<p>ա. Դասարանական անկյան ձևավորում</p> <p>բ. Աշակերտներին ներկայացնել դպրոցի ներքին կարգապահական կանոնները</p> <p>գ. Դ/ժ «Օրը սկսենք Բարևով»</p>	11.09-15.09	դասվար
III շաբաթ	<p>ա. Ծնորհալի աշակերտների ցուցակի կազմում</p> <p>բ. Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում:</p> <p>գ. Անցկացնել դասղեկի դասալսում:</p> <p>դ. Դ/ժ «Որտեղի ց է սկսվում հայրենիքը»:</p> <p>ե. Մասնակցություն ՀՀ անկախության 32-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին:</p> <p>1. <<Ազատությունն իմ աչքերով>> թեմատիկ կավճանկար:</p>	18.09-22.09	<p>դասվար</p> <p>ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ, դասվար</p>
IV շաբաթ	<p>ա. Դասարանական անկյան թարմացում:</p> <p>բ. Մասնակցություն բակի և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին:</p> <p>գ. Առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող սովորողների հաշվառում և աշխատանքների կազմակերպում:</p> <p>դ. Դ/ժ « Առողջ ապրելակերպը սկսվում է ճիշտ արթնանալուց»:</p>	25.09-29.09	Դասվար, աշակերտներ
V շաբաթ	<p>ա/ <<Ուր-ուրի օրը մեր դպրոցում>> բացիկների պատրաստում :</p> <p>բ/ Կարգապահական հարցերի քննարկում :</p> <p>գ/ <<Ինչու է անհրաժեշտ օդափոխել սենյակը>> դ/ժ դ/Գրադարանավարի օր. քննարկում <<Ինչքանով է կարևորվում գրադարանավարի մասնագիտությունը</p>	02.10-06.10	Դասվար, աշակերտներ
VI շաբաթ	<p>ա/ Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում :</p> <p>բ/ Ծնորհալի աշակերտների ցուցակի կազմում :</p> <p>գ/ <<Աշխատանքի անհրաժեշտությունը>> դ/ժ</p>	09.10-13.10	Դասվար, աշակերտներ
VII շաբաթ	<p>ա. Մասնակցություն դպրոցի փորձնական տարիանման աշխատանքներին</p> <p>բ/ Ծնողական ժողովի անցկացում /աշնանային արձակուրդ/</p> <p>գ/ դ/ժ <<Հետիոտների տեղաշարժը փողոցներով և ճանապարհներով >> :</p>	16.10-20.10	Դասվար, աշակերտներ
VIII շաբաթ	<p>ա. Ծնողներին ներգրավել դաստիարակչական աշխատանքներում՝ ծնող-ուսուցող, ծնող-խորհրդատու</p> <p>բ. Դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովվածության վիճակի ստուգում</p> <p>գ. Դ/ժ «Խնամքով օգտագործենք դասագրքերը»</p>	30.10-03.11	Դասվար, աշակերտներ
IX շաբաթ	<p>ա/ Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ:</p> <p>բ. Դասարանական անկյան թարմացում</p> <p>գ. Դ/ժ «Իմ առողջությունը իմ մաքուր ձեռքերում է»</p>	06.11-10.11	<p>դասվար</p> <p>բուժբույր</p>
X շաբաթ	<p>ա. Անվտանգ երթևեկության շաբաթի կազմակերպում</p> <p>բ. Անհատական աշխատանք ծնողների հետ</p>	13.11.-17.11	դասվար

	գ. Դ/Ժ.<< Ծանոթանանք ճանապարհային երթուղիների կանոններ>>		
XI շաբաթ	ա.<<Արագ, ուժեղ, համարձակ>> սպորտլանդիա 4-րդ,5-րդ դաս. մասնակցությամբ բ. Համագործակցություն դասավանդող ուսուցիչների հետ գ. Դ/Ժ.<<Գազը վտանգավոր կարող է լինել, եթե չգիտես նրանից օգտվելու կանոնները>>	20.11-24.11	դասվար
XII շաբաթ	ա. Դասագրքերի վերանորոգում բ.Աշխատանք հաճախ բացակայող և ուշացող աշակերտների ծնողների հետ գ. Դ/Ժ «Իմ բարեկամ թաշկինակը» դ. Անցկացնել դասղեկի դասալսում:	27.11-01.12	դասվար
XIII շաբաթ	ա/Մասնակցություն հաշմանդամների միջազգային օրվան նվիրված միջոցառումներին<<Ժպտա՝ և ջերմացրու՝ աշխարհը>>խորագրով միջոցառում բ/Մասնակցություն <<A,B,C...>>ցերեկոյթին գ/ Դ/Ժ <<Սպորտը մեր կյանքում >>	04.12-08.12	դասվար ուսուցչի օգնական
XIV շաբաթ	ա. Ընթերցանության մրցույթ.<< Գիտելիքի մեծագույն աղբյուրը գիրքն է>> խորագրով բ. Դասարանական անկյան թարմացում գ. Սեմինար-քննարկում ծնողների շրջանում դ. Դ/Ժ- <<Կրակի հետ չի կարելի խաղալ>>	11.12-15.12	դասվար
XV շաբաթ	ա. Դասասենյակինստիտուցիոնալ տրաստում/Նորտարվան բ. Ամանորյա բացման արարողություն գ. Դ/Ժ «Իմ տունն, իմ ընտանիքը» դ. Ծնողական ժողով:Սովորողների առաջադիմության ամփոփում: ե/ Ամփոփել ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ով նախատեսված աշխատանքների կատարողականը և արդյունքները: զ.<< Ամանորը մանուկների այքերով>> խորագրով միջոցառում:	18.12-22.12	դասվար Դասվար, կրտսեր դպ առ. մասնախումբ
	II կիսամյակ		
XVI շաբաթ	ա. Դպրոցական դասագրքերի, աշակերտական պիտույքների ստուգում բ. Անհատական աշխատանք հաճախ բացակայող աշակերտների ծնողների հետ գ. Դ/Ժ « Ես և իմ անունը»	08.01-12.01	դասվար
XVII շաբաթ	ա. Դասագրքերի վերանորոգում բ. Այցելություն աշակերտների ընտանիքներ գ. Դ/Ժ.<<Բրավունք և պարտականություն>>	15.01-19.01	դասվար
XVIII շաբաթ	ա. Մասնակցել Հայոց Բանակի կազմավորման 32 ամյակին նվիրված միջոցառումներին բ.<<Իմ տունը հայրենիքն է >> խորագրով միջոցառում գ. Դ/Ժ «Ես զինվորն եմ իմ երկրի» դ. Անցկացնել դասղեկի դասալսում	22.01-26.01	դասվար
XIX շաբաթ	ա. Հարստացնել դասարանական անկյունը բ. Հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին գ. Դ/Ժ « Սաքրությունն առողջության երաշխիք»	29.01-02.02	դասվար
XX շաբաթ	ա. Երթուղիների կանոնները երեխաների խմբերով անցնելու դեպքում բ. Կրթ սեղան <<Ինքնագնահատական>> թեմայով, ծնողների մասնակցությամբ գ. Դ/Ժ.<< Ընտանեկան ավանդույթներ>>	05.02-09.02	դասվար ուսուցչի օգնական
XXI շաբաթ	ա. Մասնակցություն <<Տյառնընդառաջ>> միջոցառմանը բ. Սեմինար-քննարկում.<<Պատիժ թե խրախուսում>> թեմայով /հոգեբան/ գ. Մասնակցություն գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառումներին: դ. Դ/Ժ.<< Գիրքն իմ բարեկամն է>>	12.02-16.02	Դասվար,ԱԵՊ ուսուցիչ հոգեբան
XXII շաբաթ	ա. Խաղ-մրցույթ.<<Ամեն ինչ գրքի մասին>> /գրադարանավար/ բ.<<Խոսքի և հաղորդակցման խանգարումներ ունեցող	19.02-23.02	դասվար մանկավարժի օգնական

	սովորողների կրթության կազմակերպումը>>խորագրով սեմինար-քննարկում ծնողների շրջանում գ. Դ/ժ.<< Թումանյանը և մենք>> դ. Անցկացնել դասղեկի դասալսում:		
XXIII շաբաթ	ա. Դասագրքերի վիճակի ստուգում բ. Սեմինար քննարկում ԿԱՊԿՈւ սովորողների ծնողների շրջանում<<Վերաբերմունքը և խթան, և խոչընդոտ>> թեմայով գ. Դ/ժ.<<Մեր դպրոցի հերոսները>>	26.02-01.03	դասվար մանկավարժի օգնական
XXIV շաբաթ	ա. Կանանց տոնին նվիրված տոնական բացիկների պատրաստում բ. Մասնակցություն մարտի 8-ին նվիրված միջոցառումներին: գ. Դ/ժ «Տոնդ շնորհավոր, սիրելի՛ մայրիկ» դ. Օ/ժ	04.03-08.03	Դասվար,ԴԱԿ,աշակերտներ
XXV շաբաթ	ա. Դասագրքերի,աշխատանքային տետրերի ստուգում բ. Դասարանական անկյան թարմացում գ. Դ/ժ.«Մաքրությունն առողջության երաշխիք» դ. Անցկացնել դասղեկի դասալսում:	11.03-15.03	դասվար
XXVI շաբաթ	ա. Ջրույց նվիրված աշխատանքին, արհեստներին բ. Այցելություն Ե. Չարենցի տուն-թանգարան գ. Դ/ժ «Միասնությունը ուժ է»	18.03-22.03	դասվար
XXVII շաբաթ	ա. Մերձդպրոցական տարածքի մաքրում, ծառատունկ բ. Դասագրքերի, աշխատանքային տետրերի նորոգում գ. Դ/ժ «Ծառ տնկիր, միտք սերմանիր»	01.04-05.04	դասվար
XXVIII շաբաթ	ա. Դասարանական անկյան թարմացում բ. Ցերեկույթ.<< Եկեք գովաբանենք այն կնոջը, որի անունը Մայր է>> խորագրով գ. Դ/ժ <<Բնությունն ու մարդը: Մարդը բնության մասնիկ>>	08.04-12.04	դասվար

XXIX շաբաթ	ա/ <<Որտեղից եմ գալիս և ուր եմ գնում>>.ուխտագնացություն Պանթենոն – Եղեռնի հուշակոթող բ//Անհատական աշխատանք ծնողների հետ : գ/Դ/ժ <<Կարմիր ,կանաչ ,դեղին>>	15.04-19.04	դասվար
XXX շաբաթ	ա/Անհատական աշխատանք անհարգելի բացակայող , դժվար դաստիարակվող աշակերտների ծնողների հետ: բ/Դասասենյակի հիմնավոր մաքրում: գ/Դ/ժ <<Սիրենք մեր բոլորիս մեծ տունը Հայաստանը>>	22.04-26.04	դասվար
XXXI շաբաթ	ա. Աշակերտների սանիտարական վիճակի ստուգում բ. Դասագրքերի վերանորոգում գ. Դ/ժ «Մայիսի 1-ը աշխատավորի օր»	29.04-03.05	դասվար
XXXII շաբաթ	ա.Մասնակցել դպրոցամերձ տարածքի բարեկարգման աշխատանքներին բ. Կլոր սեղան ծնողների շրջանում.<< Կրտսեր դպրոցականի ագրեսիայի պատճառները>> թեմայով / հոգեբան/ գ. Դ/ժ<<Ճանաչենք մեր հերոսներին>>	06.05-10.05	դասվար հոգեբան
XXXIII	ա. Դասագրքերի վերանորոգում բ.<<Հրաժեշտ կրտսեր դպրոցին>> խորագրով միջոցառումներ/IV դասարան/ գ. Դ/ժ «Ի՞նչ է ընկերությունն ու բարեկամությունը» դ. Անցկացնել դասղեկի դասալսում:	13.05-17.05	դասվար
XXXIV	ա. Դասագրքերը նախապատրաստել դպրոցի գրադարանին հանձնելուն բ. Էքսկուրսիայի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում գ. Դ/ժ «Աշխատիր և անպայման հաջողության կհասնես» դ.Օ/ժ- Աշակերտների տարեկան առաջադիմության ամփոփում գ/ԿԱՊԿՈւԻ և առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող սովորողների առաջադիմության վերլուծություն և գնահատում:	20.05-24.05	Դասվար,ծնողներ տնօրենություն մանակավարժա- հոգեբանական թիմ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ

Խամբ	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական Երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8		պար		
9				
10				
11				
12				
13				
14		պար		
15				
16		դաշնամուր,սոլֆեջո		
17				
18				
19		պար		
20				
21				
22		պար		
23		պար		
24			ըմբշամարտ	
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				
35				
36				
37				
38				
39				
40				
41				
42				
43				

**ԱՇԽԱՏԱՆՔԴՅԱՐԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍՎԱՏՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ,
ԾՆՈՂԱԶՈՒՐԿ, ԿԱՊԿՈՒ, ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՈՒՇԱՐԴՈՒԹՅԱՆ, ԼՈԳՈՊԵՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
ՈՒՆԵՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ**

Անցկացված աշխատանքների ժամկետները	Աշակերտների ազգանուն, անուն	Դաստիարակչական աշխատանքների մեթոդների, մանկավարժական հնարքների համառոտ բովանդակությունը	Կատարած դաստիարակչական աշխատանքների արդյունքը	Լրացուցիչ տեղեկություններ
Սեպտեմբեր	Հախվերդյան Անուշ Գզոդյան Արամ	Դպրոցի հոգեբանի հետ համագործակցելով աշխատանքներ են տարվում առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող աշակերտներ Անուշի և Արամի հետ, օգնելով նրանց ավելի շատ կենտրոնանալ դասապրոցեսին, մասնակցել դասերի ընթացքում հնչող քննարկումներին, շփվել դասընկերների հետ:	Շփվում են հասակակիցների հետ, դասերի ընթացքում երբեմն հայտնում սեփական կարծիքը:	Կատարված է
	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	Մանկավարժի օգնականների հետ համագործակցելով դասերի ժամանակ աշխատանք է տարվում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ: Ամբողջությամբ ներառված են ուսումնական գործընթացում:	Սովորողները սիրով են հաճախում դպրոց, առաջընթաց նկատվում է:	Կատարված է
Հոկտեմբեր	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	Դասերի ժամանակ աշխատանք է տարվում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ, համագործակցելով, մանկավարժի օգնականների հետ: Երկու աշակերտներն էլ ամբողջությամբ ներառված են դասապրոցեսին:	Սովորողները կարողանում են մասնակցել դասապրոցեսին, առաջընթաց նկատվում է:	Կատարված է
Նոյեմբեր	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	Դասերի ընթացքում՝ ըստ ԱՈՒՊ-ի, աշխատանքներ են տարվում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ, համագործակցելով մանկավարժի օգնականի հետ:	Սովորողներն ամբողջությամբ ներառված են դասապրոցեսին, կա զգալի առաջընթաց:	Կատարված է
Դեկտեմբեր	Գզոդյան Արամ	Դպրոցի հոգեբանի հետ համագործակցելով աշխատանքներ են տարվում Գզոդյան Արամի հետ, ագրեսիվ վարքագծի վերացման ուղղությամբ:	Ագրեսիվ վարքագծի վերացման ուղղությամբ աշխատանքները դեռ շարունակվում են:	Կատարված է
	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	Մանկավարժի օգնականի հետ համագործակցելով աշխատանքներ են տարվում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ	Տարված աշխատանքների շնորհիվ սովորողների մոտ կա զգալի առաջընթաց:	Կատարված է
Հունվար-Փետրվար	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	Դասերի ընթացքում աշխատանքներ են տարվում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ՝ համագործակցելով մանկավարժի օգնականի հետ	Առաջընթաց նկատվում է: Սովորողները հաճույքով են մասնակցում դասապրոցեսին:	Կատարված է
Մարտ	Վիրաբյան Մարո Ներսիսյան Աշոտ	ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվում են ամենօրյա աշխատանքներ, ըստ նախապես կազմած ԱՈՒՊ-ի: Աշխատանքները տարվում են մանկավարժի օգնականի հետ համագործակցելով:	ԿԱՊԿՈՒ սովորողներն ամբողջությամբ ներառված են դասապրոցեսին, կա նկատելի առաջընթաց:	Կատարված է

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
06.09.2023թ.	<ol style="list-style-type: none"> Դպրոցի ներքին կարգապահական կանոնների ներկայացում: Դասարանների ծնողխորհրդի ձևավորում: Ներկայացնել նոր ընտրված ԾԽ նախագահների տվյալները: Ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում: Հաշվառել սոցիալապես անապահով, ծնողազուրկ, ԿԱՊԿՈւ, առանձնահատուկ ուշադրության կարիք ունեցող սովորողներին: Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի մասին / աշակերտների արտաքին տեսք, փոխնորդներ, հագուստ, պայուսակներ և այլն: 	<p>Ներկայացվեց դպրոցի ներքին կարգապահական կանոնները: Ընտրվեց ծնողխորհրդի կազմը՝ նախագահ և անդամներ: Կազմվեց անապահով և ծնողազուրկ երեխաների ցուցակը: Խոսվեց հետագա անելիքների մասին:</p>	Կատարված է
23.10.2023թ.	<ol style="list-style-type: none"> Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում/ առաջադիմություն, բացակայություններ և այլն/: Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի մասին/ աշակերտների արտաքին տեսք, փոխնորդներ, հագուստ, պայուսակներ և այլն/: Սեմինար-քննարկում՝ «Հաղորդակցումը կրտսեր դպրոցական տարիքում»: 	<p>Եղավ ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում, խոսվեց բացակայություններից, սովորողների սանիտարահիգիենիկ վիճակից: Քննարկվեց «Հաղորդակցումը կրտսեր դպրոցական տարիքում» թեմայով սեմինարը:</p>	Կատարված է
28.12.2023թ.	<ol style="list-style-type: none"> Սովորողների կիսամյակային գնահատականների ամփոփում: Սովորողների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում: Կարգապահական հարցերի քննարկում: Սովորողների սանիտարահիգիենիկ վիճակի մասին/ փոխնորդներ, աշակերտների արտաքին տեսք, հագուստ, պայուսակներ և այլն/: Ձեկույց. «Կրտսեր դպրոցականի շփումը հասակակիցների հետ»: 	<p>Կատարվեց կիսամյակային գնահատականների ամփոփում: Ներկայացվեց սովորողների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվություն: Խոսվեց բացակայություններից, սովորողների սանիտարահիգիենիկ վիճակից: Քննարկվեց «Կրտսեր դպրոցականի շփումը հասակակիցների հետ» թեմայով զեկույցը:</p>	Կատարված է
26.03.2024թ.	<ol style="list-style-type: none"> Փետրվար-մարտ ամիսների ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում / առաջադիմություն, բացակայություններ, ուշացումներ/: Աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակի մասին / արտաքին տեսք, փոխնորդներ, հագուստ/: Կարգապահական հարցերի քննարկում / վարք, բջջային հեռախոսները դպրոց չբերելու մասին/: Ձեկույց. «Պատիժ թե կարգապահություն» Գարնանային արձակուրդի 	<p>Եղավ ուսումնադաստիարակչական հարցերի քննարկում: Խոսվեց աշակերտների առաջադիմությունից, բացակայություններից և ուշացումներից: Ժողովի ընթացքում կարևորվեց աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակը: Խոսվեց աշակերտների վարքի և բջջային հեռախոսները դպրոց չբերելու մասին: Քննարկվեց. «Պատիժ թե կարգապահություն» թեմայով զեկույցը: Տրվեց գարնանային արձակուրդի տևողության ժամանակացույցը:</p>	Կատարված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԵՐԻՆՔԱՐԿՎԱԾ ՔՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

Հոդված

11. Կրթության բովանդակությանը ներկայացվողը նդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններն իրենց Է են պատկանում և կառուցված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ կարգի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և երդաշնակա արգագման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմաններին ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծման և նուրբ կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՅՈՒՆՆԵՐԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Միջնակարգ կրթություն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈՂՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՅՈՒՆՆԵՐԸ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը նպատակադրված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԵՐԻՆՔԱՐԿՎԱԾ ՔՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈՂՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և նյութական և անմասնագիտության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և նյութական և անմասնագիտության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքները պահպանվում են նրա տարիքին հաստատությանը համապատասխան պատշաճ ու շարժական:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնք չեն ստանալու և հաղորդելու գաղափարներ և տեղեկատվություն հաղորդակցության անցանկալի ցանցերում:

Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել լրբերով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով,

1) սովորողների աշխարհաճանաչման և ձևավորումը գիտելիքների և կրթական ներազդերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքներին տրամադրվելը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նորմակարգակապահովող ժամանակակից անհատի քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈՂՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշիչ համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցանմանը,

ինչպես և անտվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.

3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնական տարածքում ազգային.

4) մասնակցելու ներդրողական և արտադրողական միջոցառումներին.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների և սովորողների այնպիսի գործողություններից, որոնք վնասում են սովորողի իրավունքները, կամ տնտեսական կարգի վնասումներ պատվով նրա արժանապատվությանը.

6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

7) ազատորեն փնտրելու և մատչելի լինող նստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

8) ազատ արտահայտելու և փական կարծիքներ և համոզմունքները.

Եթե դաստիարակչական և մասնագիտական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական և կարգի կամ այլ անձնակցի մասնակցի իրավունքներին ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության և մինչև 16

տարեկան երեխայի մասնակցությունը կրթական կազմակերպություններին: ՀՈՂՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատությունը ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի և հասարակության նպատակները, ստղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական,

տեխնիկական մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և
յլ: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են
տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան
ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում և
նվճարել:

ՀՈՂՎԱԾ 20 (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի,

իր տարիքի համապատասխան խաղերի և միջոցառումների հագատորեն մա
սնակցելու իրավունք:

ՀՈՂՎԱԾ

22 Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա չի կարող լինել,

ընտանեկան կյանքի,

գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնականա
նիստ անվտանգության իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվ
ել կամայական,

սպորի նիմիջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ
ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն
ուղաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերությ
ուններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգություն կատարած
քանցյուրանձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական երկայացուցիչները,
երեխայի դաստիարակությունը ուսուցումն իրականացնող այլ անձինք պատ
ասխանապատվություն են կրում մշայաստանի Հանրապետության օրենսդրությամ
բասման վաճկարգով:

ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դասղեկի կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. Դասղեկը աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝

- դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,
- Աշակերտների գործունեության կազմակերպման զուգակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
- դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
- ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
- աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատեսությունը,
- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասղեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասղեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասղեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և <<հանձնեց>> սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասղեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասղեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը:

ՀՀ ԿԳՆ նախարարի 15.08.2000թ. թիվ 264Մ հրամանի համաձայն
համարվում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթուղթ
© Կազմող՝ Վ. Միրումյան

© Տպագրության է պատրաստվել Վիամիր ՄՊԸ հրատարակության կողմից, 3000 օրինակ